ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի /համակարգիչների ձեռքբերում/

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 05.03.2018թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Վ. Ավետիսյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Հ. Սարոյանը

Ա. Պետրոսյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Կ. Եսայանը

Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Ա. Գալուստյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 27.02.2018թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի «Այ-Թի Պլազա» ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 23.02.2018թ., 27.02.2018թ. թիվ 2 որոշմամբ, համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, 27.02.2018թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Այ-Թի Պլազա» ՍՊ ընկերությանը, armeps համակարգով էլեկտրոնային եղանակով ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ մինչև 02.03.2018թ. «Այ-Թի Պլազա» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել են և համապատասխանում են ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/5 ծածկագրով հրավերի պահանջներին /կցվում են/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Այ-Թի Պլազա ՍՊ ընկերության կողմից ներկայացված ամբողջական նկարագրերի համապատասխանությունը գնահատել բավարար, հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված թիվ 1 գնահատման թերթիկները /կցվում են/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.2 Այ-Թի Պլազա ՍՊ ընկերությունը 1-ին չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.4 Ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Ավետիսյան

անդամներ՝ _____ Հ. Սարոյան

_____ Ա. Պետրոսյան

_____ Կ. Եսայան

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան